

ուսուցիչ կոչեցաւ մեծ աշխատութեամբ տարտամ սրտոյս: Այլ եւ զծնողսն իւր՝ զԴշխոյս, եւ զեղբարքն իւր զԱւետիք քահանայն եւ Պրոխորօն սարկաւագն՝ որ յայսմ ամի (1629) հանգեաւ ՚ի Քրիստոս. եւ զեղբօրորդիքն՝ զՅովհաննէս դպիրն եւ զԿարապետն եւ զՆերսէսն եւ զԿոստանդինն»:

186. Զեթուն.– Ի կարգի եպիսկոպոսացն՝ երիցագոյն քան զնշանակեալքս, յիշի յամի 1534 Տէր Դաւիթ, ՚ի մաշտոցի գրելոյ «ընդհովանեաւ սուրբ ուխտիս Ս. Յակոբայ, եւ այլ սուրբ եկեղեցեացս՝ որ աստ կան»: Գրիչն է Գաբրիէլ որդի Կոստանդինի եւ Ոսկեայ: Իսկ զառաջին յիշատակեալն մեր ՚ի կարգին՝ զՅովհաննէս ՚ի նմին (1586) ամի՝ ընդ նշանաւոր գիտնական վարդապետս տանն Ստյ դասէ վերոյիշեալ նուիրակն Լէոնարտոյ:– Առ նովաւ եւ սուղ ինչ յառաջ, չորք իշխանք Ստյ կոչէին, Խաչեր սարկաւագ որդի Քէօյէ-սըղմագի, վարպետ Շատարեւ, Մահուեսի Մաթէոս, եւ Խոճայ Փանոս:– Թերեւս յաջորդ Դաւթի իցէ Արիստակէս վարդապետ Զեթունցի, որ եկեալ կշտամբեաց սաստիկ զԹէոդորոս կաթողիկոս, վասն որդւոյ նորա (Մանէս կոչեցելոյ), յետ մահուան կնոջն՝ երկրորդ կին ածելոյ զկոյս. մինչեւ ասել «ոմանց՝ թէ զվեղարն եւս էառ». ընդ որ սրտառեալ կաթողիկոսին՝ խոյս ետ յամարանոց իւր (151):– Ի սկիզբն ԺԷ դարու յիշի Մկրտիչ եպիսկոպոս, թերեւս նոյն ընդ յիշելոյն եւ յամի 1634: Ի նմին Ժամանակի կամ խուն մի եւս յառաջ՝ կեցեալ է Դաւիթ վարդապետ Զեթունցի, զոր մի ոմն յաշակերտացն (Գրիգոր) յամի 1619, կոչէ «այր գիտնական եւ քաջ փիլիսոփայ էր, յոյժ հմուտ հին եւ նոր կտակարանաց» եւ այլն. գրողն զայսոսիկ՝ էր ՚ի Լեհս:

188. – Յետին դիպուած եւ պատահար Զեթունի՝ ծանօթ եւ զգալի է տակաւին, աղիտալի հրդեհն, որ ՚ի հերուն (1884 ՚ի 10-22 սեպտեմբերի), ճարակեալ ծախեաց զմեծ մասն մի քաղաքաւանին, տունս 500 եւ կրպակս իբր 100, որ է ասել գրեաթէ զողջոյն շուկայն:– (Արեւելք Օրագիր, Ա, Թիւք 210. 211):

– Նոր ծանօթութիւնս եւ առաջին հայերէն հրատարակութիւն գտեղոյս՝ ՚ի լոյս ընծայեաց ՚ի սկիզբն այսր ամի (1885) ՚ի Կ. Պօլիս, Յակոբ